ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

15.03.2016 թ.

Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

«Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ)

Առաջադրանքի անվանումը՝ Երևանի թիվ 153, Արարատի մարզի Նոր Խարբերդ գ. թիվ 2, Սյունիքի մարզի Կապան ք. թիվ 7, Երևանի թիվ 135, Գեղարքունիքի մարզի Գավառ ք. թիվ 2, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր ք. թիվ 2 դպրոցների տեխնիկական վիճակի ուսումնասիրության անհրաժեշտ աշխատանքների իրականացում:

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ AES-01

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի շրջանակներում իրականացնում է «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (ՍԱԲԾ) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար:

Ծրագրով նախատեսված դպրոցների պատշաճ տեխնիկական վիճակի ուսումնասիրության համար ֆինանսական միջոցներ կհատկացվեն տեղական խորհրդատուներին՝ միկրոծրագրի համալիր հետազոտությունների, ընդհանուր եզրակացությունների և անհրաժեշտ միջոցառումների ցանկը ներկայացնելու նպատակով:

Խորհրդատուի հետ կկնքվի միանվագ պայմանագիր՝ հետազոտական աշխատանքների համար:

Կնքված պայմանագրի սահմաններում կազմակերպությանը կհանձնարարվեն Երևանի թիվ 153, Արարատի մարզի Նոր Խարբերդ գ. թիվ 2, Սյունիքի մարզի Կապան ք. թիվ 7, Երևանի թիվ 135, Գեղարքունիքի մարզի Գավառ ք. թիվ 2, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր ք. թիվ 2 դպրոցների տեխնիկական վիճակի ուսումնասիրության անհրաժեշտ աշխատանքների իրականացում:

Խորհրդատուն պետք է կատարի կամ ապահովի՝

ա) Վերը նշված դպրոցների համալիր հետազոտությունը,
բ) Դպրոցների առանձին մասերի (հիմքեր, ծածկեր, տանիք, կրող կարկաս կամ պատեր և այլն) հետազոտությունը,
գ) Դպրոցների առանձին կոնստրուկտիվ տարրերի (հեծաններ, ծածկի առանձին սալեր, սյուներ, առանձին պատեր, բացվածքների ուժեղացում և այլն) հետազոտությունը,
դ) Բետոնների ֆիզիկա-մեխանիկական հատկություններ (ամրություն, ցրտակայունություն, ջրանթափանցելիություն) հետազոտությունը,
ե) Օդափոխության համակարգերի հետազոտությունը,

զ) Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հետազոտությունը,
է) Ջրամեկուսացման և ջերմամեկուսացման աշխատանքների որակի ստուգումը,
ը) Էլեկտրամատակարարման համակարգերի և էլեկտրատեխնիկական սարքավորումների հետազոտությունը,
թ) Մետաղական խողովակների և կոնստրուկտիվ տարրերի եռակցման կարերի ստուգումը,
ժ) Յուրաքանչյուր հանձնարարվող ծրագրի առաջադրանքի մշակման և իրականացման ընթացքում համագործակցությունը Պատվիրատուի մասնագետների հետ և անհրաժեշտ տեղեկություններ տրամադրում նախատեսվող հետազոտություններին ներկայացվող նորմատիվ պահանջների վերաբերյալ,
ի) Հետազոտական աշխատանքների իրականացումը ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի,
լ) Պայմանագրի ժամկետի շրջանակներում Պատվիրատուի կամ այլ շահագրգիռ կազմակերպության կողմից հրավիրված խորհրդակցություններին և հանձնաժողովների աշխատանքներին մասնակցությունը:
խ) Շինհրապարակի այցելությունների կազմակերպումը ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի:
ծ) Դպրոցների ուժեղացման՝ սեյսմազինվածության հասցնում գործող նորմատիվ պահանջների մակարդակին, համար անհրաժեշտ միջոցառումների նկարագրությունը:
կ) Դպրոցների ուժեղացման և վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նախնական, մոտավոր, խոշորացված գնահատումը:

Խորհրդատուների կարճ ցուցակի կազմման չափանիշներն են՝

Վերջին 10 տարիների ընթացքում՝

- Կազմակերպության ընդհանուր փորձառությունը /գործունեության հիմնական ոլորտների համառոտ նկարագրությունը և կատարված աշխատանքների ցանկը/,
- Նմանատիպ կառույցների՝ դպրոցների, մանկապարտեզների, հատուկ դպրոցների, համալիր և մասնակի հետազոտությունների, ընդհանուր եզրակացությունների և անհրաժեշտ միջոցառումների մշակման փորձը,
- Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում նմանատիպ ուսումնասիրությունների իրականացման փորձը:

Հայտատուների իրավասությունը պետք է սահմանվի համաձայն 2013թ. մարտին հրատարակված, պարբերաբար լրամշակվող, ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցի I մասի, հետևաբար, ոչ մի հայտատու կամ հավակնորդ հայտատու չպետք է հայտարարվի ոչ իրավասու բացառությամբ այն դեպքերի, որոնք շարադրված են Գնումների ուղեցույցի I մասում: Համաձայն ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցի ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների գործընթացներում կարող են ներգրավված լինել միայն հայտատուներ ԱԶԲ-ի անդամ-երկրներից: Ստորև բերվող հղումով կարելի ներբեռնել ԱԶԲ-ի «Ցուցումներ հայտատուներին» փաստաթղթի օրինակը, որը ներառում է Հավելված 11 (Appendix 11) ԱԶԲ-ի անդամ-երկրների ցանկը՝ http://www.adb.org/sites/default/files/page/82482/files/sanitized-itb.pdf: Ինչպես նաև հետաքրքրված Խորհրդատուների ուշադրությունն ենք հրավիրում ԱԶԲ-ի «Խորհրդատվական ծառայությունների օգտագործում», մարտ 2013թ., ուղեցույցի 1.10 «Շահերի բախում», 1.23 «Խարդախություն և կաշառակերություն» կետերում շարադրված պահանջներին:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի՝ «Խորհրդատուների ընտրություն և վարձում», հունվար 2011թ., փոփոխված հուլիս 2014թ., 3.7 կետում սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» ընթացակարգի համաձայն և նախորդ պարբերության սահմանումների համադրված կիրառմամբ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ ձեռնարկության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:

ՀՏԶՀ-ի գրասենյակի հասցեն՝ ՀՀ, 0037, Երևան, Կ.Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Գնումների վարչություն:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) ոչ ուշ քան **2016թ. մարտի 29-ը, ժամը 17:00**:

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
ՀՀ, Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների վարչություն, 409 սենյակ,
Հեռախոսը՝ (37410) 24-71-42
Ֆաքսը՝ (37410) 24-01-59
Էլ-փոստը՝ procurement@atdf.am